Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ IV ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Քրիստոնեության պատմության շրջանակներում տեղ գտած աստվածաբանական բազմաբնույթ վիճաբանությունների վարդապետական, կառուցվածքային ու աշխարհայացքային առանձնահատկությունների բացահայտումը կրոնագիտության համար հետազոտության հսկայական դաշտ է հանդիսանում նաև մեր օրերում: Եկեղեցագիտական և աստվածաբանական հետազոտությունների համակարգում վերը նշված երևույթների քննական արժեվորման գործում առանձնահատուկ տեղ է գրավում IV դարի 50-ական թվականների երրորդաբանական վիճաբանությունների, մասնավորապես, արևմտյան եպիսկոպոսների տեղական ժողովների քննական արժեվորումը, որոնք հետնիկեական դոգմատիկական վիճաբանությունների պատմության մեջ դիտարկվում են իբրև նիկեականության նկատմամբ Արևմտյան Եկեղեցու ինքնուրույն ռեակցիա:

IV դարի 50-ական թվականների արևմտյան եպիսկոպոսական ժողովների համակարգային ուսումնասիրությունը կարևորվում է մի շարք այլ տեսանկյուններից ևս: Դրանց օբյեկտիվ վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել դարաշրջանի քրիստոնեական արևմուտքի հավատքային ելևէջները, ինչը մեծապես նպաստում է նաև ***Արևմտյան Եկեղեցու «անսխալականության» հավակնությունների*** փաստարկված մերժմանը[1]: Այն պետք է կարևորել նաև տեսական, պատմական և պրակտիկ-գործնական առումներով: Երրորդաբանական հայեցակարգերի հավատքային առանձահատկությունների, դրանց դրսևորման ձևերի, այդ թվում նաև դոգմատիկայի պատմության այս կամ այն փուլը բնութագրող վիճաբանությունների համակողմանի տեսական ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունի ինչպես կրոնագիտության արդի տեսության, այնպես էլ տեսական ու պատմական աստվածաբանության համար, քանի որ թույլ է տալիս վեր հանել և արժեվորել հասարակության հո-

[1] Այդ տեսանկյունից հիմնահարցի քննական արժեվորման գործում կարելի է նախաբան համարել ռուս եկեղեցագետ-աստվածաբան Ա. Սպասկու այն պնդումը, թե «…հեռու լինելով Արևելքում ծավալված իրադարձություններից, դրանց մասին տեղյակ լինելով միայն խոսակցություններից՝ նրանք (արևմտյան եպիսկոպոսներն՝ Ա. Ք.) շատ քիչ խորացան դրանց նշանակության մեջ, թեև ճիշտ կլինի ասել, որ նման անհրաժեշտություն չէին էլ տեսնում: … Նրանք ցանկանում էին անշեղորեն հետևել Նիկիայում հաստատված Հանգանակին, … բայց վերջինիս դրական իմաստը նրանց համար մատչելի չէր և սեփական կենսական շահերը Հանգանակի հետ չէին կապում», **Проф. Спасский А.** История догматических движений в эпоху Вселенских соборов (в связи с философскими учениями того времени). Сергиев Посад, 1914, с. 338-339.

գնոր կյանքի բաղադրատարրերից մեկի՝ կրոնի պատմական ընթացքի ընդհանրական մի շարք օրինաչափություններ: Պատմական առումով հիմնահարցի գիտական ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ թույլ է տալիս քննաբար վերաարժեվորել այդ ոլորտում տեղ գտած միակողմանի ու փաստերով չամրագրված կանխակալ բոլոր տեսակետները: Եվ, վերջապես, երրորդաբանական հիմնահարցերի ուսումնասիրությունը պետք է կարևորել նաև նրանով, որ վերջինիս օբյեկտիվ վերլուծության արդյունքում բացահայտված օրինաչափությունները կարող են պրակտիկ կիրառում գտնել մերօրյա կրոնական դենոմինացիաների և հակաերրորդաբանական ներփակ համայնքների հավատքային ու աշխարհայացքային արժեհամակարգերի քննական ուսումնասիրության գործում:

IV դարի 50-ական թվականների Արևմտյան Եկեղեցու հավատքային գործունեության հանգրվանային իրադարձություններից մեկը պետք է համարել ***ֆրանսիական Արլ*** (Արլեզ, Արելատ) ***քաղաքի*** կայսերական պալատում ***հրավիրված եպիսկոպոսական ժողովը, որն իր աշխատանքներն սկսել է 353 թ.*** և ունեցել խիստ սահմանափակ թվով մասնակիցներ: Ժողովը կարևորվում է նաև նրանով, որ ***Արելատում արևմտյան եպիսկոպոսներն առաջին անգամ, առանց արևելյան եպիսկոպոսների օժանդակության, անդրադարձան ինչպես դոգմատիկական*** (երրորդաբանական), այնպես էլ ***կանոնական հարցերի քննարկմանը***: Դատելով սկզբնաղբյուրներից՝ արևմտյան եպիսկոպոսների համար ժողովական քննարկումներն ընթացան բավականին ծանր իրավիճակում, քանի որ այն գումարվել էր Կոստանցիուս կայսեր հրամանով, որն արևմտյան եպիսկոպոսներից վճռապես պահանջում էր քննարկել «պետական հանցագործության մեջ մեղադրվող»[2] Ս. Աթանաս Ալեքսանդրացու հարցը և դատապարտել նրան: Այդ տեսանկյունից արևմտյան եպիսկոպոսների համար Արելատի ժողովի քննարկումները պետք է համարել հավատի յուրահատուկ փորձություն, քանի որ միանգամայն ակնհայտ էր, որ այն հրավիրվել և գործում էր իբրև Սարդիկեի[3]

---

[2] Ս. Աթանաս Ալեքսանդրացին հաղորդում է, որ իրեն մեղադրում էին այն բանում, թե նա, իբր, Կոստանցիուսի դեմ է տրամադրել եղբորը՝ Արևմտյան կեսար Կոստանսին, բարեկամական հարաբերություններ է հաստատել խռովարար Մագնենցիուսի հետ և հանդիսանում է կայսեր օրինական իշխանության բացահայտ թշնամին: Ոչնչով չհիմնավորված այդ մեղադրանքի հանգամանալից մերժումը տե՛ս **Свт. Афанасий Великий.** Защитительное слово Аѳанасія, архіепископа александрійскаго, передъ царемъ Констанціемъ. Творения в четырех томах. Т. II, М., 1994, с. 46-52.

[3] Սարդիկեի 342 թ. ժողովից հետո Կոստանս կեսարը, պաշտպանելով արևմտյան եպիսկոպոսների պահանջները, պատերազմի սպառնալիքով Կոստանցիուսից պահանջեց «կա՛մ վերադարձնել Արևմուտք աքսորված եպիսկոպոսներին, կա՛մ պատրաստվել պատերազմի»: Կայսրության ներքին ու արտաքին կացությունը Կոստանցիուսին հարկադրեց բավարարել եղբոր պահանջը: Աթանաս Ալեքսանդրացին, Պողոս Կոստանդնուպոլսեցին և Մարկելոս Անկյուրիացին վերադարձան իրենց աթոռանիստ կենտրոնները: Այդ ամենի մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий.** Защитительное слово против аріан. Творения в четырех томах. Т. I, М., 1994, с. 330, 331, 345-346, **Նույնին** Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріан). Творения в четырех томах. Т. II, с. 117-118; **Созомен Эрмий Саламинский**. Церковная история. СПб., 1851, кн. III, гл. 12, с. 188-189; **Сократ Схоластик**. Церковная история, М., 1996, кн. II, гл, 24, с. 93; **Феодорит еписк. Кирский.** Церковная история. СПѣ., 1852, кн. II, гл, 8, с. 129-131. î»°ë Ý³¨ St. **Hilary of Poitiers**. De Synodis. In:

ժողովական որոշումների հակոտնյա:

Բայց քանի որ ժողովին ներկա չէր ո՛չ Ս. Աթանաս Ալեքսանդրացին և ո՛չ էլ նրա որևէ ներկայացուցիչ, բնական է, որ ժողովականները չէին կարող օբյեկտիվորեն քննել Ալեքսանդրիայի Պապին առաջադրված մեղադրականը: Եվ քանի որ ժողովական եպիսկոպոսները «վախեցան կասեցնել» նաև Ս. Աթանաս Մեծին առաջադրվող մեղադրանքի քննարկումը, նրանք փորձ կատարեցին քննարկումները տեղափոխել դոգմատիկական դաշտ: Այդ իսկ պատճառով էլ ժողովական եպիսկոպոսներն առաջարկեցին նախ քննարկել հավատքի և նոր միայն՝ Ս. Աթանասի մեղադրականի հետ կապված հարցերը[4]: Բայց, խուսափողական այդ քայլը կատարելով, արևմտյան եպիսկոպոսներն իրենց խորամանկության զոհը դարձան:

Ս. Աթանաս Ալեքսանդրացու գործն անմիջապես տարանջատվեց հավատքային հարցերից, որտեղ նրա նկատմամբ որևէ պատիժ կիրառելը գործնականում անհնարին էր և ներկայացված մեղադրանքների հիման վրա Արելատի ժողովը, այդ թվում նաև Հռոմի Լիբերիոս քահանայապետի երկու նվիրակները դատապարտեցին Ս. Աթանասին: Վավերագրերը վկայում են, որ արևմտյան եպիսկոպոսներից միայն Տրիրի եպիսկոպոս Պավլինոսն առարկեց հարցերի տարանջատմանը և հրաժարվեց ստորագրել Աթանասի դատապարտության փաստաթուղթը, որի պատճառով էլ աքսորվեց Փռյուգիա[5]: Այդ տեսանկյունից էլ ոչ միայն հիմնովին սնանկ պետք է համարել սեփական «հավատքային բացառիկության» մասին կաթոլիկության ամեն մի պնդում, այլև խստորեն պետք է դատապարտել այն, որ քրիստոնեական Արևմուտքում Ս. Աթանաս Ալեքսանդրացու դատապարտության առաջին քայլը կատարվեց այդքան արագ և այդքան թեթևությամբ[6]:

Այդ կապակցությամբ ոչնչով չհիմնավորված դատողությունների թվին պետք է դասել նաև մասնագիտական գրականության մեջ շրջանառվող այն տեսակետը, թե Արելատի ժողովը «խիստ աննշան» էր, որպեսզի «հեղինակություն» դառնար ողջ Արևմուտքի համար[7]: Անշուշտ, քրիստոնեական Արևմուտքում ձևավորված այդ իրա-

---

Nicene and Post-Nicene Fathers (ed. by Philip Schaff and Henry Wace). V. 9, Peabody, Massachusetts, 1995, 32, p. 13 (հմմտ. **Migne J. P**. Patrologiae cursus completus. Series Latina (այսուհետ՝ **PL**), Acc. s. t. X, p. 504); **Mansi J. D.** Sacrorum Consiliorum nova et amplissima collectio. V. 6, Paris, 1900, p. 1209; V. 7, Paris, 1900, p. 1215 sqq. ¨ այլն:

[4] Տե՛ս **Сулпициус Северус**. Хронология. Кн. II, гл. 39: Տե՛ս նաև **Свт. Афанасий Великий.** Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріанъ), Т. II, с. 127.

[5] Տե՛ս **Сулпициус Северус**. նշվ. աշխ., գլ. 39: Տե՛ս նաև **Свт. Афанасий Великий.** Защитительное слово, въ котором святый Аѳанасій оправдывает бъгство свое во время гоненія, произведенного дукомъ Сиріаномъ. Творения в четырех томах. Т. II, с. 79. Աթանաս Ալեքսանդրացին հիշատակում է նաև, որ Տրիրի եպիսկոպոս Պավլինոսը Կոստանցիուս կայսրին հակադրվել է նաև Մեդիոլանի ժողովում, տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріанъ), с. 130-131.

[6] Проф. **Спасский А.** նշվ. աշխ., էջ 340:

[7] Արելատի ժողովական քննարկումների և ընդունած որոշումների վերաբերյալ այդ մոտեցումն

վիճակում խիստ ցանկալի կլիներ, որ Արելատի ժողովն «աննշան» դեր և «հեղինակություն» ունենար: Բայց բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ իրադարձությունների հետագա ընթացքն ավելի շուտ վկայում է հակառակը: Նման եզրակացության համար անհրաժեշտ և բավարար հիմք է հանդիսանում արևմտյան մի այլ՝ Մեդիոլանի (Միլանի) ժողովական որոշումների և դրան հաջորդող եկեղեցական պատմության քննական արժեվորումը:

Բոլոր հիմքերն առկա են պնդելու, որ ***Մեդիոլանի ժողովը հանդիսանում է Արելատի ժողովի օրգանական շարունակությունը***: Արևմտյան եկեղեցական մատենագրությունը ևս լիովին հաստատում է այդ պնդումը: Մասնավորապես, Մեդիոլանի ժողովի հրավիրման վերաբերյալ այն պնդում է, թե Հռոմի Լիբերիոս քահանայապետը, խիստ դժգոհ մնալով Արելատում իր նվիրակների գործունեությունից, արևմտյան ազդեցիկ եպիսկոպոսներ Լյուցիֆեր Կալաբրիացու, Եվսեբիոս Վերչելացու և Դիոնիսիոս Մեդիոլանացու աջակցությամբ մի նոր դեսպանություն է ուղարկում Կոստանցիուս կայսեր մոտ՝ խնդրելով Արելատում քննարկված հարցերի վերաբերյալ պարզաբանումների համար հրավիրել ևս մեկ «ընդհանուր ժողով»[8]: Քննարկվող հիմնահարցն ուսումնասիրող աստվածաբանների ու եկեղեցագետների բացարձակ մեծամասնության մոտեցումն այն է, թե Կոստանցիուս կայսրը, ձգտելով «Աթանաս Ալեքսանդրացուն դատապարտել ավելի մեծ ժողովում»[9], ընդառաջեց ընդհանուրի առա-

անընդունելի պետք է համարել մի շարք տեսանկյուններից: Այդ համատեքստում նախ պետք է նկատել, որ արևմտյան այդ ժողովի քննարկումների վերաբերյալ փաստերի սակավությունն ամենևին էլ նրա «աննշան» լինելու ապացույցը չէ, քանի որ նույն մեթոդաբանության դիրքերից կարելի է պնդել նաև, որ ժողովի վերաբերյալ միտումնավոր է լռություն պահպանվում: Ճիշտ այդպես էլ վկայակոչումներն այն մասին, թե վերջինիս «աննշան» դերը հիմնավորվում է նրանով, որ արևելյան եկեղեցական պատմիչները ժողովի մասին լիակատար լռություն են պահպանում, նույնպես նպատակավրեպ է, քանի որ հակաաթանասյան ցանկացած գործարքի վերաբերյալ եկեղեցական մատենագրության քննադատական ոգին չափից դուրս ակնհայտ է: Կարծում ենք, կաթոլիկյան սկզբնաղբյուրներում տեղ գտած այդ մոտեցումները միտված են մի բանի՝ լռության մատնել քրիստոնեական Արևմուտքի «հավատքային տատանումները» և այդ ճանապարհին դրսևորված սխալներն ու բացթողումները: Անկախ բոլոր պատճառներից, Արելատի ժողովը պետք է դիտարկել իբրև մի գործընթացի սկիզբ, որի տրամաբանական հետևանքը հանդիսացավ քրիստոնեական Արևմուտքի անցումը հակաաթանասյան և, վերջին հաշվով, հականիկեականության դիրքերի:

[8] Այդ մասին մանրամասները տե՛ս **Hilarius**. Fragment VI, Kigne / **Migne J. P. PL**, Acc. s., t. 10, p. 686 sqq: Ավելացնենք նաև, որ նախորդ ծանոթության մեջ մատնանշված պատճառներով Մեդիոլանի ժողովի մասին ևս մեզ են հասել խիստ մակերեսային ու երկրորդական մանրամասնություններ:

[9] Այս առնչությամբ ամենից առաջ հարկ է մատնանշել, որ Ս. Աթանաս Մեծի դատապարտության գործում Կոստանցիուս կայսրն ակամա առնչվում էր բազմաթիվ բարդությունների հետ: Այդ շարքում, ամենայն հավանականությամբ, գլխավորը «Սարդիկայի հետևանքների» հաղթահարման ձգտումն էր: Բանն այն է, որ, ընդառաջելով եղբոր՝ արևմտյան կեսար Կոստանսի պահանջին, Կոստանցիուսը ոչ միայն ակամա համաձայնել էր Ս. Աթանաս Ալեքսանդրացու «կանոնական դատապարտումը» հերքող Սարդիկայի որոշման հետ, այլև՝ **երեք ինքնագիր ուղերձներով երաշխավորել էր Ս. Աթանասի անձեռնմխելիությունը և վերադարձն իր Աթոռ**, ինչի մասին տեղյակ էր պահվել նաև համապատասխան նվիրապետական կենտրոններին: Այդ ուղերձներով Կոստանցիուս կայսրը պահանջում էր նաև «ոչնչացնել Ս. Աթանասի դեմ եղած նախորդ շրջանի բոլոր «ակտերը», որպեսզի նրա հետ հաղորդակցվելն

ջարկին և կարգադրեց նոր ժողով հրավիրել Մեդիոլանում, ուր տեղափոխեց նաև իր ճամբարը:

Մեդիոլանի ժողովն իր աշխատանքներն սկսեց 355 թ., որին մասնակցում էին 30-40 եպիսկոպոսներ, այդ թվում նաև՝ Արևելքից[10]: Վավերագրերը վկայում են, որ ժողովական քննարկումները ղեկավարել են Սինգեդոնի եպիսկոպոս Ուրզակին և Մուրսիայի եպիսկոպոս Վաղեսը, որոնք, զինվելով «Արելատի փորձով», Ս. Աթանաս Ալեքսանդրացուն ներկայացրած «մեղադրանքի» քննարկումը տարանջատեցին դոգմատիկական քննարկումներից: Այդ իրողությունն է վկայում և այն, որ երբ ժողովի սկզբում Դիոնիսիոս Մեդիոլանացին Եվսեբիոս Վերչելացու առաջարկով բարձրացրեց Նիկեական հանգանակը վերահաստատելու հարցը, Վաղես Մուրսիացին «բռնությամբ Հանգանակը խլեց Դիոնիսիոսի ձեռքից» և հայտարարեց, որ Նիկեական Հանգանակի «վերահաստատում երբեք չի լինի»: Հայտնվում է և այն մասին, որ այդ «հանդուգն փորձից» հետո քննարկումները տեղափոխվեցին կայսերական պալատ, ինչն էլ Կոստանցիուսին հնարավորություն տվեց ուղղակի միջամտել քննարկումներին:

Այդ կապակցությամբ ամենից առաջ մերժողական վերաբերմունք պետք է դրսևորել այն տեսակետի նկատմամբ, թե, իբր, «արևմտյան եպիսկոպոսները ժողով էին եկել հավատի, ինչպես նաև Աթանասի գործը պաշտպանելու վճռական մտադրությամբ»[11]: Հարաբերական այդ ճշմարտությունը բնորոշ էր միայն խիստ սահմանափակ թվով արևմտյան եպիսկոպոսների, որոնք, վավերագրերի վկայությամբ, Ս. Աթանաս Ալեքսանդրացուն մեղադրանք առաջադրելու ժամանակ այն քննարկելու փոխարեն համարձակորեն դատապարտեցին Ուրզակի Սինգեդոնացուն և Վաղես Մուրսիացուն: Այդժամ վարագույրի հետևից քննարկումներին անտես կերպով հետևող Կոստանցիուս կայսրը, դահլիճ մտնելով, եպիսկոպոսներին հայտարարեց. «Ես ինքս եմ

ազատ լինի»: Մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий.** Защитительное слово Аѳанасія, архіепископа александрійскаго, передъ царемъ Констанціемъ, с. 351-357; **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл, 23, с. 87-92 ¨ այլն:

[10] Միլանի ժողովի մասնակիցների թվի մասին մեզ հասած տեղեկությունները խիստ հակասական են: Սոկրատես պատմիչը պնդում է, թե ժողովին մասնակցել են 300-ից ավել եպիսկոպոս, Սոզոմենոս պատմիչը՝ 300 եպիսկոպոս (տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл, 36, с. 105; **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. IV, гл. 9, с. 237): Թեոդորետը ժողովականների թվի մասին լռություն է պահպանում: Մանսին համարում է, որ «գավառներից աննշան թվով եպիսկոպոսներ էին ժամանել» (Տե՛ս **Mansi**. Cons. Coll. T. III, Paris, 1850, p. 238): Կարդինալ Բորոնիոսը Վերչելի եկեղեցում պահպանվող արխիվային փաստաթղթի հիման վրա թվարկում է Միլանի ժողովի որոշումներն ստորագրած ընդամենը 30 եպիսկոպոսի անուն, որոնց թվում եղել են նաև արևելյան 6 եպիսկոպոսներ (տե՛ս **Baronius**. Annales Ecclesias. T. 4, Laucae, 1739, p. 541-542): Արևմտյան եպիսկոպոսների թվում հիշատակվում են Լիբերիոս Հռոմեացին, Լյուցիֆեր Կալաբրիացին, Եվսեբիոս Վերչելացին, Դիոնիսիոս Մեդիոլանացին, Հիլարիոս Պուատիեցին և ուրիշներ: Իսկ արևելյան եպիսկոպոսների թվում հիշատակվում են մոլի հակաաթանասյան Ուրզակի Սինգեդոնացին, Վաղես Մուրսիացին, ինչպես նաև՝ Գրիգոր Ալեքսանդրացին, Ղևոնդիոս Անտիոքացին, Ակակիոս Կեսարացին, Եվստաթեոս Սեբաստացին, հավանաբար նաև՝ Եվդոկսիոս Գերմանիկեցին:

[11] Պրոֆ. **Спасский А.** նշվ. աշխ., էջ 340-341.

դատապարտում Աթանասին, և հանուն ինձ դուք պետք է հավատաք Վաղեսին»: Ժողովականներն ապարդյուն կերպով կայսրին փորձում էին համոզել այն բանում, թե այդ ճանապարհով Ս. Աթանասին դատապարտելը դեմ է Եկեղեցու կանոնակարգին, որին ի պատասխան Կոստանցիուս կայսրը, սրով հարվածելով նախագահական սեղանին, հայտարարում է, թե «ձեզ համար կանոն պետք է լինի իմ կամքը» և աքսորի ու մահվան սպառնալիքով պահանջում Ս. Աթանասին մեղավոր ճանաչել[12]:

Իրադարձությունների հետագա ծավալումը ցույց տվեց, որ ժողովական բոլոր որոշումներն ընդունվեցին «կայսերական սցենարով»: Բացառություն կազմեցին միայն ընդդիմադիր երեք եպիսկոպոսներ՝ Լյուցիֆեր Կալաբրիացին, Եվսեբիոս Վերչելացին և Դիոնիսիոս Մեդիոլանացին, որոնք աքսորվեցին Արևելք[13]: Իսկ մյուս ***բոլոր ժողովականներն իրենց ստորագրությամբ վավերացրեցին Ս. Աթանաս Ալեքսանդրացուն դատապարտող ժողովական որոշումը և վերականգնեցին Սարդիկայի ժողովից հետո արևելյան եպիսկոպոսների հետ խզված հարաբերությունները***: Մեդիոլանում ձեռք բերած «թեթև հաղթանակը» հակաաթանասյան խմբակցությանը մի փոքր ավելի ուշ թույլ տվեց հարկադրանքներ կիրառել նաև արևմտյան այն եպիսկոպոսների նկատմամբ, որոնք միտումնավոր կերպով Մեդիոլան չէին ներկայացել: Մասնավորապես, Հոզիա Կորդուբացին, Սիրմիումում ձերբակալվելով, աքսորվեց Գերմանիկե, Հիլարիոս Պուատիեցին աքսորվեց Փոյուգիա, իսկ Լիբերիոս Հռոմեացին՝ Թրակիա[14]: Ինչ վերաբերում է Ս. Աթանասին, ապա նրան ձերբակալելու փորձ կատարվեց միայն 356 թ. ձմռանը[15]:

Անդրադառնալով այդ ամենի քննական արժեվորմանն՝ ամենից առաջ հարկ ենք համարում հիմնովին անընդունելի համարել Միլանի ժողովի և դրան հաջորդած իրադարձությունների գնահատման Ա. Սպասկու մեթոդաբանությունը: Նա ճշմարիտ

---

[12] Մանրամասները **Свт. Афанасий Великий.** Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріанъ), с. 130-131, 168:

[13] Տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріанъ), с. 130-131; **Свт. Афанасий Великий.** Защитительное слово, въ котором святый Аѳанасій оправдывает бъгство свое во время гоненія, произведенного дукомъ Сиріаномъ, с. 79; **Hilarius**. Fragment VI, Kigne / **PL**, Acc. s., t. 10, p. 686 sqq.

[14] Տե՛ս **Hilarius**. Fragment VI, Kigne / **PL**, Acc. s., t. 10, p. 686, **Свт. Афанасий Великий.** Посланіе епископа Аѳанасія къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История аріанъ), с. 145; **Свт. Афанасий Великий.** Защитительное слово, въ котором святый Аѳанасій оправдывает бъгство свое во время гоненія, произведенного дукомъ Сиріаномъ, с. 95-96.

[15] Ս. Աթանաս Ալեքսանդրացին վկայում է, որ 356 թ. հունվարին Կոստանցիուսի կարգադրությամբ Ալեքսանդրիայի զինվորական ղեկավար Սիրիանը, Եկեղեցում բռնություններ կիրառելով, փորձել է ձերբակալել իրեն, սակայն ինքը կարողացել է բավականին հուսալիորեն թաքնվել, տե՛ս **Свт. Афанасий Великий.** Защитительное слово, въ котором святый Аѳанасій оправдывает бъгство свое во время гоненія, произведенного дукомъ Сиріаномъ, с 95-96: Սոզոմենոս պատմիչը հավելում է, որ Աթանաս Մեծը վերին տնօրինությամբ 7 տարի շարունակ Ալեքսանդրիայում թաքնվում էր Աստծուն նվիրված մի գեղանի կույսի մոտ, որը «իր գեղեցկությամբ բոլոր կանանց այնպես է գերազանցում, որ նրան տեսնողներն այդ գեղեցկությունը համարում էին հրաշք»: Տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. V, гл. 6, с. 322-323:

է, երբ պնդում է, թե Մեդիոլանում «արևմտյան ընդդիմությունը կոտրվեց, և Աթանաս Ալեքսանդրացու բոլոր կողմնակիցները հալածանքների ենթարկվեցին»: Սակայն միանգամայն անընդունելի է նրա մերկապարանոց այն պնդումը, թե ալեքսանդրյան նվիրապետի մնացյալ կողմնակիցները միայն «... ձևականորեն համաձայնեցին դատապարտությանը և հաղորդության մեջ մտան Աթանասի հակառակորդների հետ»[16]: Կարծում ենք, այս պարագայում տեղին է մեկ անգամ ևս փաստել, որ ուղղադավան ***եպիսկոպոսական դասի կողմից հավատքային հարցերում լիովին անթույլատրելի է հերձվածության նկատմամբ ցանկացած՝ թեկուզև «ձևական համաձայնության» ամեն մի դրսևորում***: Չէ՞ որ, բոլոր հարկադրանքները զանց առնելով, Ս. Աթանաս Ալեքսանդրացին չխոնարհվեց ոչ մի բռնության դեմ: Չէ՞ որ նրա օրինակին հետևող Լյուցիֆեր Կալաբրիացին, Եվսեբիոս Վերչելացին և Դիոնիսիոս Մեդիոլանացին ևս, արհամարհելով ամեն մի սպառնալիք, մինչև վերջ պաշտպան կանգնեցին իրենց համոզմունքներին:

Եվ եթե համաձայնենք անգամ ոչ մի հիմնավորում չունեցող այն պնդմանը, թե արևմտյան եպիսկոպոսների մեծամասնությունը միայն ձևականորեն համաձայնեց դատապարտել Ս. Աթանաս Ալեքսանդրացուն, ապա անվիճելի պետք է համարել նաև, որ, ***հաղորդության մեջ մտնելով Ս. Աթանաս Մեծի հակառակորդների հետ, արևմտյան եպիսկոպոսները ոչ միայն դավաճանեցին նիկեականության նվիրյալին, այլև՝ գործնականում անցում կատարեցին հականիկեականության դիրքերը***: Եվ պետք է նկատել նաև, որ «անձնատուր լինելու» արևմտյան եպիսկոպոսների թուլակամությունը ծանր հետևանքներ ունեցավ եկեղեցական պատմության հետագա ընթացքի վրա, քանի որ գործունեության անսահման ասպարեզ բացեց հականիկեական ընդդիմության համար, որի օրինաչափ արդյունքն էլ պետք է համարել Սիրմիումի դավանաբանական նորարարությունները և, ***հատկապես, 357 թ. դոգմատիկական 2-րդ բանաձևը***[17]:

Ընդհանրապես, Սիրմիումի 2-րդ բանաձևի վերաբերյալ երրորդաբանական և դոգմատիկայի պատմությանը նվիրված վերլուծական աշխատանքները համերաշխ են այն հարցում, որ հանձին դրա IV դարի 50-ականների վերջին հականիկեական ընդդիմությունը մի վերջին ու վճռական փորձ կատարեց մահացող հակաերրորդաբանությունը վերածնելու ուղղությամբ: Այդ համատեքստում համարվում է նաև, որ հրապարակ նետված Սիրմիումի 2-րդ բանաձևը հանդիսանում է անտիոքյան հականիկեական բանաձևերի, այդ թվում՝ «Ղուկիանոսի Հանգանակի» օրգանական շարու-

---

[16] Проф. **Спасский А.** նշվ. աշխ., էջ 342:

[17] Հետևելով քրիստոնեական մատենագրությանը՝ կարելի է պնդել, որ Սիրմիումի դավանաբանական երեք բանաձևերն (351 թ., 357 թ. և 358 թ.) էլ կազմվել են մինչնիկեական երրորդաբանական ավանդույթների դիրքերից, ավելի ճիշտ կլինի ասել՝ մինչնիկեական երրորդաբանական աստիճանակարգության դիրքերից: Այդ բանաձևերի ամբողջական տեքստերը տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском. Творения в четырех томах. Т. III, М., 1994, с. 127-132; **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл, 29, с. 97-98, 102.

նակությունն ու լրացումը:

Սիրմիումի 2-րդ բանաձևի քննությունը ցույց է տալիս, որ համագոյության աստվածաբանության դեմ պայքարի այս փուլում ***հականիկեական երրորդաբանները հերթական անգամ փորձում են ուղղադավան աստվածաբանական լուծումները ետ շրջել դեպի Հայր և Որդի Աստծու կարգային հաջորդականություն***: Հետաքրքրական է և այն, որ Սիրմիումի ժողովական եպիսկոպոսները, խախտելով Եկեղեցում ձևավորված ավանդությունն, իրենց «աստվածաբանական նորամուծությունը» ներկայացրեցին ոչ թե ***ավանդական դարձած հանգանակի, այլ՝ աստվածաբանական տրակտատի ձևով***: Սիրմիումի հակաերրորդաբանական 2-րդ բանաձևը ելակետային է համարում Հայր և Որդի Աստծու փոխհարաբերության սահմանների ճշգրտումը: Բանաձևի նախաբանում այդ մասին հռչակվում է. «Ինչպես ազդարարված է ողջ տիեզերքում, գոյություն ունի միայն մեկ՝ Ամենակալ Հայր Աստված և նրա Միածին Որդին՝ մեր տեր Հիսուս Քրիստոսը»:

Դոգմատիկական այդ սկզբունքը, սակայն, նրանց համար մեկնակետային է ոչ թե երրորդաբանական աստվածաբանական ուղղադավան լուծումների, այլ՝ կարգային հաջորդականության մասին դոգմատիկ պատկերացումները հիմնավորելու համար: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ, դուրս գալով «հակաերրորդաբանների տրորված արահետից», սիրմիումականները Հայր և Որդի Աստծո համագոյությունը մերժում են այն պատրվակով, թե, իբր, Հիսուս Քրիստոսին Աստված համարելու պարագայում անխուսափելիորեն կհանգենք երկաստվածության (դիթեիզմի): Այդ հիման վրա էլ սիրմիումականները պնդում են, թե աստվածաբանական առումով «չպետք է խոսք լինի երկու Աստվածների մասին, այլ կերպ ասած՝ պետք է հիմնովին մերժվի համագոյությունը, քանի որ Հիսուսն ինքն ասաց. *«... ես բարձրանում եմ դէպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը»* (Հովհ. Ի 17): Այդ ելակետերի դիրքերից էլ սիրմիումական եպիսկոպոսները ձգտում էին իրենց «արդարացնել» և այն կապակցությամբ, թե Պողոս առաքյալը ևս սովորեցնում է, որ Հայրն է բոլորի Աստվածը՝ *«Աստուած միայն հրեաների՞նն է եւ հեթանոսներինը՝ ո՞չ. այո՛, հեթանոսներինն էլ է. քանի որ մէ՛կ Աստուած կայ»* (Հռոմ. Գ 29-30) և Ս. Գրքի մյուս բոլոր հատվածները համաձայն են դրան»: Այդ հենքի վրա էլ շարադրվում է ուղղադավանությանը հակադիր Սիրմիումի մանիֆեստը[18], որը հռչակում է, թե շատերին վրդոված հա-

[18] «Զի շատս վրդովէ լատին substantia կոչուած եւ յոյն ουσια կամ ομοιουσιον վերաբերէալ հարց, ապա ոչ մի յայդմ արտայայտութենէ ոչ յիշատակեսցի եւ ոչ բացատրեսցի յԵկեղեցի, այնու պատճառաւ եւ այնու հիմամբ, զի ոչ կան ի Գիրս Սուրբս նման արտայայտութիւնք եւ դոքա վեր են ի մտաց եւ ի բանականութենէ մարդկայնոյ, զի ոչ ոք կարասցէ բացատրել զծնունդն Որդւոյ: «Նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի» (Եսայի. ԾԳ 8): Ի նմին կողմանէ, ոչ ոք կասկածէ, որ Հայր մեծ է, քան զՈրդի: Եւ ամէն ոք հաստատապէս համաձայնեսցի, որ Հաւր իւր Փառաւք, արժանեաւք, զԱստուածութեամբ եւ Անուամբ բարձր քան զՈրդի, զօր վկայէ եւ Որդի «... իմ Հայրը մեծ է, քան ես» (Հովհ. ԺԴ 28): Նոյնպէս յայտ է ամենայնի ուսմունքն զայն կաթողիկէ, որ կայ դէմս երկուսս՝ Հաւր եւ Որդւոյ, եւ Հաւր բարձր է, իսկ յՈրդի ամենայնիւ ենթակա է Հաւր: Եւ Հաւրն է անսկիզբ, անտէս, անմահ եւ անկիրք: Իսկ Որդի ծնեալ է ի Հաւրէ, Աստուած յԱստուոյ, Լոյս ի Լուսոյ»: Տե՛ս **Свт. Афанасий Великий.** Посланіе о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском, с. 131-132 (բանաձևի ամբողջական տեքստը **նույն**

մագոյության հարցը, հետևաբար նաև համագոյության աստվածաբանությունը պետք է լիովին մերժվի Եկեղեցու կողմից և դրանց հիշատակության կամ մեկնության մասին ոչինչ չպետք է ասվի այն պատճառով, որ համագոյության մասին Ս. Գրքում ոչինչ ասված չէ: Բանաձևը համագոյության աստվածաբանությունը հիմնովին մերժում է և այն տեսանկյունից, թե այդ հարցի քննությունը վեր է մարդկային մտքի հնարավորության սահմաններից և այնկողմնային է բանականության համար:

Այդ հենքի վրա էլ հականիկեականության ոգով հռչակվում է Սիրմիումի 2-րդ բանաձև - «աստվածաբանական մանիֆեստը», որի հավատքային էության քննությունը նպատակահարմար է կատարել Նիկեական Հանգանակի համեմատությամբ՝

Նիկեական Հանգանակ	Սիրմիումի 2-րդ բանաձև
«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, ... եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդի Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն՝ յէութենե Հօր: Նոյն ինքն ի բնութենէ Հօր ... «	«... ոչ ոք կասկածէ, որ Հաւր մեծ է, քան զՈրդի: Եւ ամէն ոք հաստատապէս համաձայնեսցի, որ Հաւր իւր Փառաւք, արժանեաւք, յԱստուա-ծութեամբ եւ Անուամբ բարձր քան զՈրդին ...: Նոյնպէս յայտ է ամենայնի ուսմունքն այն կաթողիկէ, որ կայ դեմս երկուսս՝ Հաւր եւ Որդւոյ, եւ Հաւր բարձր է, իսկ յՈրդի ամենայնիւ ենթակա է Հաւր: Եւ է Հաւրն անսկիզբ, անտես, անմահ եւ անկիրք: Իսկ յՈրդի ծնեալ ի Հաւրէ, Աստուած յԱստծոյ եւ Լոյս՝ ի Լուսոյ»

Առաջին իսկ հայացքից անգամ չափազանց ակնհայտ է, որ Սիրմիումի 2-րդ բանաձևը սուր ծայրով ուղղված է նիկեական երրորդաբանական աստվածաբանության դեմ: Ավելի կոնկրետ՝ նիկեական համագոյության աստվածաբանությունը մերժվում է

տեղում, էջ 130-132), **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл, 30, с. 100-101; **Kelli J. N. D.** Early Christian Creeds (3rd ed). Singapore, 1993, p. 114.

Հիշատակություններ են պահպանվել և այն մասին, որ Սիրմիումի 2-րդ բանաձևը հեղինակել և իր կամքին հակառակ ստորագրությամբ վավերական է համարել զառամյալ Հոզիա Կորդուբացին, ինչպես նաև՝ Պոտամիոս Օլիզիպոնացին (Լիսաբոնացին): Այդ ամենից հետո այդ «աստվածանարգանքը» վավերական ճանաչելու միտումով ներկայացվեց ժողովականների և, ընդհանրապես, եպիսկոպոսական դասի «վավերացմանը»: Տեղեկություններ են պահպանվել և այն մասին, որ Սիրմիումի 2-րդ բանաձևն իր ստորագրությամբ վավերական է համարել նաև Հռոմի Լիբերիոս քահանայապետը, որից հետո ազատ է արձակվել աքսորից: Այդ ամենի մասին մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий.** Защитительное слово, въ которомъ святый Аѳанасій оправдывает бъгство свое во время гоненія, произведенного дукомъ Сиріаномъ, с. 79; **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл, 31, с. 102; **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. IV, гл. 6, с. 231.

կարգային հաջորդականության նախանիկեական վարդապետության դիրքերից և համարվում է, թե իբր «Փառքով, արժանիքով, աստվածությամբ և հենց Անունով Հայր Աստված մեծ է Որդուց»: Իսկ դա նշանակում է, որ Սիրմիումի 2-րդ բանաձևն իր դարն ապրած երրորդաբանական աստվածաբանության ոգով փորձում է հիմնավորել նաև հավատքային այն սնանկ հիմնադրույթը, թե եկեղեցական «ուղղադավան վարդապետության» համաձայն աստվածային «երկու Դեմք կա՝ Հոր և Որդու, և Հայրը բարձր է, իսկ Որդին ամեն ինչով ենթակա է Հորը»: Եվ, վերջապես, ուղղադավան երրորդաբանության դիրքերից լիովին անընդունելի պետք է համարել նաև Սիրմիումի 2-րդ բանաձևի այն անհեթեթ պնդումը, թե «Հայրն անսկիզբ է, անտեսանելի է, անմահ և անկիրք», իսկ Որդին, ծնված լինելով Հայր Աստծուց, պարզապես հանդիսանում է նրա հատկանիշների սոսկական կրողը, քանի որ միայն Հայր Աստծո միջոցով է, որ Որդուն անվանում են «Աստված՝ Աստծուց, և Լույս՝ Լույսից»:

Այս ամենը գալիս են վկայելու, որ, ի տարբերություն «Ղուկիանոսի Հանգանակի», որը նիկեական երրորդաբանության մերժման գործում առաջնորդվում էր «ծպտված հակաերրորդաբանությամբ», Սիրմիումի 2-րդ բանաձևի հրապարակումով IV դարի կեսերի հակաերրորդաբանները ոչ միայն բացահայտ կերպով կանգնեցին հականիկեական դիրքերում և «Հայր Աստված բարձր է Որդի Աստծուց» բանաձևումով Հայր և Որդի Աստծու միջև հաստատեցին կարգային հաջորդականություն, այլև այդ հիման վրա հանդես եկան աստվածային եզակիության վարդապետության պաշտպանությամբ: Եվ քանի որ Սիրմիումի 2-րդ բանաձևի հաստատումով շահագրգիռ էր նաև կայսերական իշխանությունը, այդ հիման վրա էլ ***հականիկեական ընդդիմությունը թեկուզև կարճ ժամանակով, այնուամենայնիվ, ծանր հարված հասցրեց նիկեական ուղղադավանությանը***:

Բայց պետք է նշել նաև, որ այդ «հաղթանակը» դարձավ հակաերրորդաբանության կարապի երգը: Սիրմիումի 2-րդ բանաձևը յուրահատուկ ջրբաժան դարձավ ժամանակի աստվածաբանական-երրորդաբանական վիճաբանությունների համակարգում: Նրա հրապարակ իջնելուց հետո արևելյան եպիսկոպոսները, քաջ գիտակցելով ուղղադավան հավատքի պահպանման հրամայականն, աստիճանաբար համախմբվեցին նիկեականների շուրջ, որով մեծապես նպաստեցին հականիկեական ընդդիմության քայքայմանը և անխուսափելի կործանմանը: Այդ գործընթացում նախկինի նման շրջադարձային դեր կատարեցին ալեքսանդրյան Հայրերը, հատկապես՝ Ս. Աթանաս Ալեքսանդրացին և նրա ջանքերով հրավիրված Ալեքսանդրիայի 362 թ. ժողովը: